



ԳՐԱԶ

(Ա 1806 Հ Կ Ա Պ Լ Ա)



I.

շնանալին, մութ գիշեր էր։ Ծերունի սեղանաւորը իւր սենեակում անկիւնից-անկիւն էր գնում գալիս և լիշում, թէ ինչպէս տասն և հինգ տարի սորանից առաջ, աշնանը ինչուր էր սարքել։ Այդ երեկոյթին ներկայ էին բազմաթիւ խելօք անձինք և շատ հետաքրքրական հարցեր էին շօշափել։ Ի միջի ալլոց խօսում էին և մահուան պատժի մասին։ Հիւրեղը, որոնց մէջ սակաւաթիւ չէին և գիտնականներ ու լրագրողներ, մեծ մասամբ մահուան պատժին վերաբերում էին բացասաբար։ Նոքա այդ եղանակ պատիժը արդէն հնացած, քրիստոնեալ պետութիւնների համար անհամապատասխան և անբարույթական էին համարում։ Նոցանից ոմանց կարծիքով մահուան պատիժը ամեն տեղ անհրաժեշտ էր փօխարինել ցմահ բանտարկութեամբ։

—Ես ձեզ հետ համաձայն չեմ, առաց տանուտէր սեղանաւորը։ Ես չեմ փորձել ոչ մահուան պատիժը, և ոչ ցմահ բանտարկութիւնը, բայց եթէ դատելու լինենք ձ քրօգի, ալն ժամանակ, ըստ իս, մահուան պատիժն աւելի բարայական է և մարդասիրական, քան բանտարկութիւնը։ Մահուան պատիժն սպանում է մի-

անգամից, իսկ ցմահ բանտարկութիւնը հետզհետէ: Ձեզ
եմ հարցնում. որ գահին է առաւել մարդասէր: Նո,
որ ձեզ կապանէ մի քանի բոլորի մէջ, թէ նա, որ ձեր
կեանքը դուրս կփորդէ տարիների ընթացքում:

—Թէ մէկը և թէ միւսը հաւասարապէս անբա-
րուական է, —նկատեց հիւրերից մէկը, — որովհետև եր-
կուսն էլ միւնսոյն նպատակն ունին՝ խլել կեանքը, Պե-
տութիւնը — Աստուած չէ: Նա իրաւունք չունի խլել
ինչ որ անկարող է կրկին վերագրձնել, եթէկամենալ:
Հիւրերի թւում կար և մի իրաւաբան, մօտ քսան
և հինգ տարեկան մի երիտասարդ: Երբ նորա կարծի-
քը հարցրին, նա պատասխանեց.

—Թէ մտհուան պատիժը և թէ ցմահ բանտար-
կութիւնը հաւասարապէս անբարուական է, բայց, եթէ
ինձ առաջարկէին ընտրել մտհուան պատիժ կոմ ցմահ
բանտարկութիւն, այն ժամանակ, ի հարկէ, ես երկ-
րարդը կընտրէի: Կեանքը, ինչպէս էլ ապրելու լինիսք,
աւելի լաւ է, քան շապրելը:

Տաք վիճաբանութիւն սկսուեցաւ: Սեղանաւորը,
որ այն ժամանակ առաւել երիտասարդ ու ջզային էր,
յանկարծ չափազանց տաքացաւ, բռունցքով սեղանին
դարկեց և գոչեց, դառնալով երիտասարդ փաստաբանին.

— Ճշմարիտ չէ: Գրագ եմ գալիս ձեզ հետ երկու
միլիոնով, որ գուշ հինգ տարի անգամ բանտում նըս-
տելու համբերութիւն չեք ունենալ:

— Եթէ լրջութեամբ էք ասում այդ, — պատասխա-
նեց իրաւաբանը, — ապա գրագ եմ գալիս, որ կնստեմ
ոչ միայն հնգ, այլ նոյն իսկ տասնեւհինգ տարի:

— Տասնեւհինգ: Համաձայն եմ, — գոչեց սեղանա-
ւորը: — Պարսններ, գնում եմ երկու միլիոն:

— Համաձայն եմ: Դուք գնում էք երկու միլիոն,
իսկ ես իմ ազատութիւնս, տաց փաստաբանը:

Եւ այդ վայրենի, անմիտ գրազը լնդունուեցաւ:
Սեղանաւորը, որ այն ժամանակ իւր միլիոնների հա-
շիւր չգիտէր, երես առած և թեթևսօլիկ, հրճուած
էր իւր գրազով: Ընթրիքի ժամանակ նա զուարճաբա-
նում էր ի հաշիւր փաստաբանի և ասում.

— Ինչքի եկէք, երիտասարդ պարոն, քանի ուշ չէ:

Խնձ համար երկու միլիոնը մի չնչին բան է, իսկ դուք ձեր կետնքի երեք չորս լուսագոյն տարիների հետ էք խաղում: Ասում եմ եմ երեք չորս, որովհետև դուք համբերութիւն չեք ունենալ առաւել երկար նստելու, Մի մոռանաք, գժեազդ, որ կամաւոր արգելանքն առաւել ծանր է պարտաւորիչ բանտարկութիւնից: Այն միտքը, որ դուք իւրաքանչիւր բռայէ իրաւունք ունիք տղատութիւն գտնելու, բանտում ձեր կեանքը կթունաւորէ: Ես ցաւում եմ ձեզ վրայ:

Եւ ալժմ սեղանաւորը անկիւնից անկիւն քայլելով, լիշում էր ալդ բոլորը և հարցնում ինքն իրեն:

— Ի՞նչ միտք ունէր ալս գրազը: Ի՞նչ օգուտ, թէ իրաւաբանը տասնեւհինգ տարի կորցրեց իւր կեսնքից, իսկ ես երկու միլիոն եմ դուրս նետում: Կարսող է ալդ բանը ապացուցանել մարդիկներին, որ մտհուան պատիժն աւելի վատթար. կամ աւելի լաւ է ցմահ բանտարկութիւնից: Ոչ և ոչ: Անմտութիւն և յիմարութիւն: Իմ կողմից դա զեղխացած ու լղփացած մարդու բովէական քմահաճոյք էր, իսկ փաստաբանի կողմից — պարզ դրամական ագահութիւն...

Ապա նա լիեց, թէ ինչ պատահեց նկարտզրած երեկորից յետոյ: Վճռուեցաւ, որ փաստաբանը իւր բանտարգելութիւնը պիտի կրէ սեղանաւորի պարտիզում շինուած մի առանձին շէնքի մէջ, ամենախիստ հսկողութեան տակ: Պայմաննուորուեցան, որ տասնեւհինգ տարուայ ընթացքում նա զրկուած պիտի լինի իւր ընակարանի շէմքից դուրս սոտք կոխելուց, մարդկներ տեսնելուց, մարդկալին ձայն լսելուց և նամակներ ու լրագիր ստանալուց: Նորան իրաւունք էր տրում ունենալ երաժշտական գործիք. կարդալ գրքեր, նամակներ գրել, դինի խմել և ծխել: Արտաքին աշխարհի հետ ըստ պարմանի, նա կարող էր յարաբերութիւն ունենալ, միայն լուռ ու մունջ, մի փոքրիկ պատուհանի միջով, որ լատկուակա այդ բանի համար շինուած էր: Ամեն բան, ինչ որ պէտք էր, — գրքեր, երաժշտական խազեր, զինի և ալլն, նա կարող էր ստանալ տոմսակով ինչ քանակութեամբ որ ցանկանար, միայն լուսամուտի միջից: Պայմանը նախատեսած էր ամեն մտնրամասնութիւն և

չնչին հանգամանք, որով բանտարկութիւնը խիստ միակեցիկ էր դարձնում և պարտաւորեցնում էր փաստաբանին նստել ուղիղ տասնեւհինգ տարի, այնէ 1870թ. նոյեմբերի 14-ի առաւտեան 12 ժամից մինչև 1885 թուականի նոյեմբերի 14-ի առաւտեան 12 ժամը։ Փաստաբանի կողմից պայմանը խախտելու ամենաչնչին փորձը, նոյն իսկ պայմանաժամից երկու րոպէ առաջ, սեղանաւորին ազատ էր կացուցանում երկու միլիոնը վճարելու պարտաւորութիւնից։

Բանտարգելութեան առաջին տարին փաստաբանը, որչափ կարելի էր դատել նորա համառօտ տոմսերից, սաստիկ նեղւում էր միայնակութիւնից և ձանձրութիւնից։ Նորա բնակարանից օր ու գիշեր շարունակ գաշնակի ձայն էր լսում։ Նա հրաժարուեցաւ գինուց և ծխախոտից։ Գինին, գրում էր նա, գրգռում է ցանկութիւններ, իսկ ցանկութիւնները՝ բանտարկեալի առաջին թշնամիներն են. աւելացնենք և այն, որ լաւ գինի խմել ու ոչի չտեսնելուց աւելի ձանձրալի բան լինել չէ կարող։ Իսկ ծխախոտը նորա սենետի օդն է ապականում։ Առաջին տարին փաստաբանն ստանում էր առաւել թեթև բովանդակութեամբ գրքեր, — սիրային բարդ ու կնճռալի իմաստով վէպեր, քրէական և երևակայական պատմուածքներ, կատակերգութիւններ և այլն։

Երկրորդ տարին առանձնական բնտկարաննում ալլան չէր լսում գաշնակի ձայն և փաստաբանը իւր տոմսակներով պահանջում էր դասական երկեր։ Հինգերորդ տարին նորից լսուեցաւ գաշնակի ձայնը և բանտարկեալը խնդրեց գինի ուղարկել։ Նոքա, որոնք գիտում էին նորան լուսումուտից, պատմում էին, որ այդ ամբողջ տարին նա միայն ուտում, խմում և պառկած էր անկողնի վրայ, յաճախ յօրանջում էր, զայրացած խօսում ինքն իրեն։ Գրքեր չէր կարդում։ Երբեմն գիշերները նա նստում էր գրելու. գրում էր երկար և առաւտեան գէմ բոլոր գրածները մանր բզկթում։ Յաճախ էին լսում, թէ ինչպէս լալիս էր նա։

Վեցերորդ տարուայ երկրորդ կիսամեկին նա մեծ եռանդով սկսեց ուսումնասիրել լեզուներ, փիլիսոփա-

զութիւն և պատմութիւն։ Կա ագահութեամբ կպել էր այդ գիտութիւններին և սեղանաւորը հազիւ էր կարս-ղանում նոր գրքեր բերել տալ նորա համար։ Չորս տարուալ ընթացքում, նորա պահանջմամբ, բերել տը-րուեցաւ մօտ վեց հարիւր հատոր։ Այդ լափշտակու-թեան շրջանում սեղանաւորը ի միջի ալլոց ստացաւ ալսպիսի մի նամակ։ — «Իմ լարգելի բանտապետ։ Այս տողերը գրում եմ ձեզ վեց լեզուով։ Ցոյց տուէք այդ ձեռնհաս և գիտակ անձանց։ Թող կարգան։ Եթէ նոքա ալդտեղ ոչ մի սխալ չեն դանիլ, ապա աղաջում եմ ձեզ, հրամալեցէք որ պարտիզում հրազէն պարպեն։ Հրազէնի ձայնը ինձ կասէ, որ իզուր չեն կորել իմ ջանքերը։ Բոլոր գարերի և բոլոր երկիրների հանճար-ները խօսում են գանազան լեզուներով, բայց նոցա բո-լորի մէջ ևս նոյն հուրն է բոցավառում։ Օ՛, եթէ գուք իմանալիք, թէ ինչ երկնալին բաղտաւորութեամբ է համակուած հոգիս այն զգացմամբ, որ ես նոցա բո-լորին ևս հասկանում եմ։ Կալանաւորի ցանկութիւնը կատարուեցաւ։ Սեղանաւորը հրամալեց պարտիզում եր-կու անգամ հրազէն պարպել։

Տասներորդ տարուց իետու վիասաաբանը տնշարժ-նստած էր սեղանի մօտ և միայն Աւետարան էր կար-դում։ Սեղանաւորի համար օտարօտի էր թւում, որ մի մարդ, որ չորս տարուալ ընթացքում կարողացել է վեց հարիւր համար գիտուն գլքեր կլանել, մօտ մի տարի էր կորցնում մի շատ գիւրըմբոնելի և բարակ գրքի վրայ։ Աւետարանին լաջորգեցին կրօնների պատմու-թիւնն ու տստուտաբանսւթիւնը։

Բանտարգելութեան վերջին երկու տարուալ ըն-թացքում կալանաւորը խիստ շատ էր կարգում և ա-ռանց որևէ ընտրութեան։ Երբեմն նա զբաղւում էր քնական գիտութիւններով, երբեմն պահանջում էր հայրըն կամ Շէքսպիր։ Այսպիսի տոմսեր էր գրում, որով պահանջում էր միաժամանակ և բնալուծութեան և բժշկական ձեռնարկ, և վէպ և որևէ փիլիսոփայա-կան կոմ աստուածաբանական գիտական քննադատու-թիւն։ Նորա ընթերցանութիւնը նմանում էր այն բժ-նին, որ իբր նա լազում էր ծովում իւր խորտակուած

նաւի բեկորների մէջ և, կամենալով ազատել իւր կեանքը, ագտհութեամբ վրայ էր պրծնում բռնելու մի կամ միւս բեկորը:

II.

Ծերունի սեղանաւորը լիշում էր այս բոլորը և մտածում.

«Վաղը ժամը 12-ին նա ազատութիւն է ստանում: Պայմանի համաձայն, ես պարտաւոր եմ երկու միլիոն. Հատուցանել նորուն: Եթէ ես հատուցանեմ, ապա ամեն, ինչ կորած է, — ես բոլորովին տնօքանդ կլինիմ...»:

Տասնեւհինգ տարի առաջ նա իւր միլիոնների հաշիւր չգիտէր. իսկ այժմ նա վախենում էր ինքն իրեն. Հարցնելուց, բնչ ունի աւելի պարտք թէ դրամ: Բորսալիին լանդուգն խաղերը, վտանգաւոր շահագիտական. Ճեռնարկութիւնները և բռնկուղ բնաւորութիւնը, որից նա չկարողացաւ ազատուել նոյն իսկ ծերութեան. Ժամանակ, կամաց կամաց նորա գործերը տնկման հասցրին և տներկիւղ, ինքնավստահ, հպարտ մեծասունը. միջին կարգի սեղանաւոր էր դարձել, որի դողն է բըռնում արդէլթզիւրի գների իւրաքանչիւր աճումն ու նուազումը:

— Անիծեալ դրազ, — փնտինթում էր ծերուկը և յուսահատութիւնից մաղերը փետում: — Ինչու չմեռաւ այն մարդը: Նո դեռ ևս քառասուն տարեկան է: Նա կառնէ իմ վերջին ունեցածս, կամուսնանայ, կզուարճանաւալ և կվայելէ կեանքը, կիսազայ բօրսալում, իսկ ես՝ ինչպէս մի աղքատ, ողորմելի, ամեն օր նախանձով պիտի գիտեմ նորան և լսեմ նորանից միևնոյն խօսքերը. «Ես իմ բազատաւորութիւնը ձեզ եմ պարտական, թոյլ տուէք օգնել ձեզ», Ո՞չ. սա արդէն չափազանց է: Մնանկութիւնից և խալտառակութիւնից ազատուելու միակ միջոցը — այդ մարդու մահն է:

Ժամը երեքը խփեց: Սեղանաւորը ուշագրութեամբ ականջ էր գնում, տանն ամենքը քնած են և լսելի. էր միայն թէ ինչպէս դուրսը ցրտահար ծառերը սոսավում էին:

Աշխատելով ոչ մի ձայն-ծպտուն չհանել, նա ան-

կիզելի արկղից հանեց այն գոտն բանալին, որ տասն և հինգ տարի չէր բացուել, հագաւ վերարկուն և տնից ելաւ:

Պարտիզում մուժ էր և ցուրտ: Անձրև էր գալիս: Սուր, կծու խոնաւ քամին փչում էր պարտիզում և հանգիստ չէր տալիս ծառերին: Սեղանաւորը ամբողջապէս տեսողութիւն էր գործել, բայց չկարողանալով տեսնել ոչ գետինը, ոչ սպիտակ անդրիները, ոչ առողջանակ բնակտրանը, ոչ ծառերը: Մօտենալով այն տեղին, ուր գտնուում էր բանտարկեալի առանձնակ բնոկարանը: Նու երկու տնգամ կանչեց պահապանին: Պատաժխան չկար: Անկասկած, պահապանը փախել էր անտառների եղանակի երեսից և ալժմ մըրափում էր կամ խոհանոցում և կամ ջերմոցի մի անկիւնում:

«Եթէ ես արիութիւն ունենամ կատարելու իմ մըրադրութիւնս, — մտածեց ծերուկը, — ապա կասկածն ամենից առաջ պահապանի վրայ կընկնի»:

Մթութեան մէջ շօշափեց աստիճանները և գուռը և մտաւ առանձնակի նախասենետակը, ապա խարխափելով հսկաւ մի փոքր միջանցք և լուցկի վառեց: Ոչ «ք չկար: Ինչ որ մահճակալ էր դրուած, առանց անկողնի, իսկ անկիւնում սեփն էր տալիս թուշէ վառարանը: Կալանաւորի սենետակի դռների կնիքները անվնաս էին:

Երբ լուցկին մարեց, ծերուկը, յուզումից ամբողջապէս գոզալով, նայեց փոքրիկ լուսամուտի միջից:

Կալանաւորի սենեկում ազօտ վառւում էր մոմը, ինքը՝ կալանաւորը նստած էր սեղանի մօտ: Նշմարուամ էր միայն մէջքը, գլմի մազերը և ձեռքը: Սեղանի, երկու բազկաթոռների և գորգի վրայ ընկած էին բաց գլքեր:

Անցաւ հինգ ըսպէ, բայց կալանաւորը ոչ մի անգամ չշարժուեցաւ: Տասն և հինգ տարուայ արգելանքը սովորեցրել էր նորան անշարժ նստելը: Սեղանաւորը մատով թխթիսկացրեց լուսամուտը, բայց կալանաւորը այդ ձայնին ևս չպատասխանեց ոչ մի շարժումով: Այն ժամանակ սեղանաւորը զգուշութեամբ պոկեց գուան կնիքները և բանալին փականքի ծակն անցրեց: Ժանգուած փականքը խոպոտ ձայն հանեց և դուռը ճռւաց: Սեղանաւորը սպասում էր, որ ահա կլսուի զարմացման բացականչութիւն և քալեր, բայց երեք

բոսէ անցաւ, իսկ դռան միւս կողմը նախկին լոռութիւն էր տիրում: Նա վճռեց ներս մտնել:

Սեղանի առաջ նստած էր մէկը, որ ամենեին նը-ման չէր սովորական մարդիկներին: Դա մի կմախք էր, որ լոկ միայն մորթով էր պատաժ, երկար կանացի հիւսակներով և թանձր մօրուսով: Դէմքը գեղին էր, հողի գոյն ստացած, ալտերը խոր ընկած, թիկունքը երկար և նեղիկ, իսկ այն բազուկը, որի վերայ յենած էր գլուխը, մինչ այն աստիճան բարակ էր և նիշար, որ նալել չէր կարելի: Ալիքն արդէն փալլում էր նորա մագերում և գիտելով արդ հիւծուած, զառամեալ գէմքին, ոչ ոք չէր հաւատալ, որ նա միայն քառասուն տարեկան է: Նա քնած էր... Նորա խոնարհած գլխի առաջ մի թերթ թուղթ կար, որի վրալ, խիստ մանր գրով, ինչ որ բան էր գրուած:

«Ղորմելի մարդ, — մտածեց սեղանաւորը: Քնած է և անշուշտ միլիններ է երազում: Սակայն բաւական է միայն, որ վերջնեմ այս կիսամեռին, ձգեմ անկողնի վրայ բարձը թեթևակի բերնին սխմեմ և ամենաբարեխիղճ բժշկական քննութիւնն իսկ ա՝ կարող կլինի բռնի մահուան հետքեր գտնել: Բայց, նախ կարդանք թէ ինչ է գրել սորա վրայ...»

Սեղանաւորը վերցրեց սեղանի վրայից թերթը և կարդաց հետևեալը

—Վաղը առաւօտեան 12 ժամին ես ազատութիւն պիտի ստանամ, ինչպէս և մարդկանց հետ յարաբերութիւն ունենալու իրաւունք: Բայց նախ քան ես կը թողնեմ այս սենեակը և արև կտեսնեմ, ես պարտք եմ համարում ձեզ մի քանի խօսք ասել: Մաքուր խղճով և Աստուծոյ առաջ, որ տեսնում է ինձ, յայտնում եմ ձեզ, որ ես ատում եմ և ազատութիւնը, և կեանքը, և առողջութիւնը և այն ամենը, ինչ որ ձեր գրքերի մէջ աշխարհային բարիք է կոչւում:

«Ճասն և հինգ տարի շարունակ ես ամենալն ու-շադրութեամբ ուսումնասւիրեցի երկարին կեանքը: Ֆըշ-մարիտ է, ես չեմ տեսել ոչ աշխարհը, ոչ էլ մարդկանց, բայց ձեր գրքերի մէջ ես խմել եմ նեկտար և անուշաբոյր գինի, երգել եմ երգեր, անտառներում

ալացել եմ եղջերուների և վալրի վարտզների լեռելից
սիրել եմ կանանց... Զեր հանճարեղ բանաստեղծներէ
կախարդանքով ստեղծագործած ամպի չափ թեթև, ե-
թերային գեղեցկուհիները ինձ ալցելում էին գեշեր-
ները և հրաշագուն հէքետթներ էին մրմնջում տկան-
ջիս, որից արբենում էր դլուխս. Զեր գրքերի մէջ ես
Ելքրուսի և Մանրյանի գագաթներն էի սաւառնում և
այնտեղից դժուում, թէ ինչպէս առաօտները ծագում
էր արել և ինչպէս երեկոները նա ոսկեզօծում էր եր-
կինքը, ովկիանոսը և լեռնային կտտարները իւր ծիրա-
նեգոյն ըստորով. ես տեսնում էի այնտեղից, թէ ինչ-
պէս իմ գլխավերես, ամազերը ճեղքելով, փալլատակում
էր կալծակը. ես տեսնում էի սազարթագեղ անտառներ,
դաշտեր, գետեր, լճեր, քաղաքներ, լսում էի լուշկա-
պարիկների ու համբարուների հրաշալի երգերը և հո-
վուական սրինդների գալլավիկները, շօշափում էի գե-
ղանի գեղերի թեները, որոնք թռչում ինձ մօտ էին գա-
լիս զրուցելու Աստուծոյ մտսին... Զեր գրքերում ես
անյատակ անդունդներն էի զահավիժում, հրաշքներ
կտտարում, սպանում, քաղաքներ հրոլ ճարակ դարձ-
նում, նոր կրօններ քարոզում, ամբողջ հարստութիւն-
ներ, պետութիւններ նուաճում...

«Զեր գրքերն ինձ իմաստութիւն պարգևեցին: Այն
ամենն, ինչ որ մարդկալին յոգնաշխատ միտքը գարե-
րավ է ստեղծագործել, իմ գանգի մէջ սեղմուած է մի
փոքրիկ կոէթի, կտորի մէջ: Ես գիտեմ, որ ձեզնից՝
ամենքիցդ ևս խելօք եմ:

«Եւ ես արհամարհում եմ ձեր գրքերը. արհամար-
հում եմ աշխարհի բոլոր բարիքներն ու իմաստու-
թիւնը: Ամեն ինչ գատարկ է, եղծանելի ու ապակա-
նացու, ցնորսական ու խաբուսիկ, ինչպէս շամանդադ:
Վնաս չկալ, որ գուք հպարտ էք, իմաստուն և գեղե-
ցիկ, բայց մահը ձեզ էլ կորըէ կտանէ աշխարհին երե-
սից, ինչպէս լատակի տակ ծածկուած մկներին, իսկ
ձեր սերունդը, պատմութիւնը, ձեր հանճարների ան-
մահութիւնը կսուռչին կամ կայրուին երկրագնդի հետ:
«Դուք խելալեղ էք դարձել, լիմարացել և գնում
էք ոչ հարկաւոր ուղղութեամբ: Աստութիւնը դուք եքը

ճշմարտութիւն էք ընդունում և տձեռութիւնն իբր գեղեցկութիւն։ Դուք կզարմանալիք, անշուշտ, եթէ որևէ հանգամանքի շնորհիւ խնձորենիների կամ նարնջենիների վրայ նոցա պտուղների փոխարէն գորտեր և խլէզները բանէին կամ թէ վարդերը քրսնած ձիու հոտ տալ սկսէին, ճիշտ այդպէս էլ ես եմ զարմանում ձեզ վրայ, որ երկինքը երկրի հետ էք փոխել։ Ես չեմ կամենում ըմբռնել ձեզ։

Որպէս զի գործով ապացուցանեմ թէ արհամարհում եմ այն, ինչով դուք էք ապրում, ես հրաժարում եմ երկու միջիօնից, որի մասին երբեմն երազում էի, ինչպէս զրախտի մտսին, և որ այժմ արհամարհում եմ։ Որպէս զի այդ երկու միջիօնն ստանալու իրաւունքից զրկուիմ, ես դուրս կզամ այստեղից պայմանաժամկց հինգ ժամ առաջ և այդպիսով կխախտեմ պայմանը...»։

Կարդալով ալդ բոլորը սեղսնաւորը թերթը կրկին սեղանի վրայ դրեց, համբուրեց օտարօտի մարդու գըլուխը, արտասուեց և ելաւ նորա բնակարանից Երբէք, մի ալլ ժամանակ, նոյն իսկ բօրսալում սպստիկ տանուլ տալուց լետոյ, նա երբէք ալնքան խիստ արհամարանք չէր զգացել դէպի իւր անձը, ինչպէս այդ բոպէին։ Տուն դառնալով, նա անկողին մտաւ, բայց յուզումն ու արտասուքը երկար ժամանակ չէին թողնում, որ նա քնէ...»

Հետևետու օրն առաւօտեան դալկահար պահապանները վազելով եկան լալանեցին նորան, թէ ինչպէս տեսան իրենք, որ առանձնակ բնակարանում ապրող մարդը, լուսամուտից պարտէզ թռաւ, գնաց դէպի դարբասը և անլալտացաւ։ Սեղանաւորն իսկոյն, ծառաների հետ, գնաց բանտարկեալի կացարանը և հաւաստիցաւ, որ իւր բանտարկեալը փախել է։ Որպէս զի աւելորդ տարածախնութիւնների տեղիք չտրուի, նա սեղանից վեցըրեց հրաժարման թերթը և, տուն դառնալով, դրեց անկիզելի արկղի մէջ։

Տ. Ա.